ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2022թ. N _____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՀԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածներով, 67-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխել «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության:
2. Հաստատել «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
3. «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով սույն որոշման 1-ին կետով անվանափոխված «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը:
4. Սահմանել, որ «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:
5. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության անվանափոխման և «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման գործընթացների իրականացումը:

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092 **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված

Կազմված է 05.10.2022 թ. և բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Երևան քաղաքի ավագանու

___ . _____ 2022թ.

թիվ _____-Ա որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

_____ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ **19.03.2004 թ.**
գրանցման համար՝ **222.120.00271**
հարկ վճարողի հաշվառման համար՝
01002597
21.07.2010թ. գրանցված կանոնադրության
թիվ _____.____ փոփոխությունը
գրանցված է իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
“_____”_____ 2022 թ.

Աշխատակից՝

_____ _____

«ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
փակ բաժնետիրական ընկերության
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
(փոփոխություն)

«ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության տիտղոսաթերթի վրա «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» բառերը փոխարինել «ԵՐԵՎԱՆ» բառով:

2. Կանոնադրության 1.1-րդ կետում ««ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերությունը (հետագայում ընկերություն)» բառերը փոխարինել ««ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերությունը (նախկին անվանումը՝ «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերություն, հետագայում ընկերություն)» բառերով:

3. Կանոնադրության 1.2-րդ կետում «Ընկերությունը ստեղծվել է» բառերը փոխարինել ««ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է» բառերով:

4. Կանոնադրության 1.7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.7. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝	«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետրական ընկերություն
կրճատ՝	«Երևան» ԲԿ ՓԲԸ
ռուսերեն լրիվ՝	Закрытое Акционерное Общество МЕДИЦИНСКИЙ ЦЕНТР "ЕРЕВАН"
կրճատ՝	ЗАО МЦ "ЕРЕВАН"
անգլերեն լրիվ՝	“YEREVAN” MEDICAL CENTER Closed joint-stock company
կրճատ՝	“YEREVAN” MC Closed J-S Company»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերության 21.07.2010թ. գրանցված կանոնադրության (փոփոխությունները գրանցվել են 04.07.2012թ. և 08.02.2013թ.) բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՀԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստի-տուտ» փակ բաժնետիրական ընկերությունը (ՓԲԸ) (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 1961 թվականին: 30.10.2003թ. Հայաստանի Հանրապետության Կառավարության հ.1413-Ն որոշման համաձայն՝ ՀՀ ԱՆ «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտա-հետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն միավորման ճանապարհով վերակազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ին որպես Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի «Սրտաբանության գիտահետա-զոտական ինստիտուտ» դուստր ՓԲԸ: ՀՀ Կառավարության «14» մայիսի 2007 թվականի N 485-Ա որոշման համաձայն՝ Ընկերությունը վերակազմակերպվել է առանձնացման ժանապարհով որպես Երևանի ենթակայության «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ:

Ընկերության գործունեության ոլորտներն են.

1. Հիվանդանոցային բուժօգնություն,
2. Արտահիվանդանոցային բուժօգնություն,
3. Գիտա-կրթական գործունեություն:

Ընկերության կողմից հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայությունները մատուցվում են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում և վճարովի հիմունքերով:

Հիվանդանոցային ծառայությունների իրականացման համար Ընկերության մահճակալային ֆոնդում առկա է 80 մահճակալ, որոնք բաշխված են հետևյալ կերպ.

- Ընդունարան
- Վերակենդանացմանև ինտենսիվ թերապիայի (10 մահճակալ),
- Ինտերվենցիոն սրտաբանության և կլինիկական էլեկտրոֆիզիոլոգիայի բաժանմունք (10 մահճակալ),
- Ընդհանուր սրտաբանության բաժանմունք (60 մահճակալ):

Ընդ որում՝ մահճակալային ֆոնդը չի օգտագործվում առավելագույն հզորությամբ՝ պայմանավորված հոսպիտալացված հիվանդների քիչ քանակով՝ արդյունքում Ընկերությանը չապահովելով հավելյալ եկամուտներ:

Համաձայն Երևանի քաղաքապետի 2022 թվականի հունիսի 28-ի հ.2422-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի՝ ընկերության հաստիքային միավորները

կազմում են 163,5 դրույք:

Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող շենք-շինությունը 9,967.7 քմ տարածք /կլինիկական մասնաշենք/ և օժանդակ կառույցներ՝ 2,201.1 քմ ընդհանուր մակերեսով: Շենքը և շինությունները շահագործման են հանձնվել 1972 թվականին: Շինությունների մեծ մասը գտնվում են անմխիթար վիճակում և 1990-ական թվականների կեսերից սկսած չեն վերանորոգվել, ունեն կապիտալ նորոգման անհրաժեշտություն, ուստի չեն օգտագործվում ըստ նպատակային նշանակության: Կլինիկական մասնաշենքի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ հարկաբաժինները մասամբ վերանորոգվել են 2005-2010թթ., սակայն առկա է ընթացիկ վերանորոգման խիստ անհրաժեշտություն:

Դեռևս 2006 թվականի ապրիլի 4-ին «ՌՈԲ ՎԵԼՈՒԵՅՇՆ» ՍՊԸ-ի կողմից կատարված գնահատման եզրակացության՝ կլինիկական մասնաշենքի վիճակը գնահատվել էր լավ, դիահերձարանը, ճաշարանը և պահակատունը՝ բավարար, իսկ մնացած շինությունների վիճակը՝ անբավարար: Կլինիկական մասնաշենքի մաշվածությունը կազմում է 50-70%: Տանիքը և նկուղը ունեն անհապաղ վերանորոգման կարիք:

Առաջնահերթ է Ընկերության լիարժեք ջեռուցման համակարգի տեղադրման խնդիրը, քանզի մինչ այսօր գերակշռորեն ինստիտուտը ջեռուցվում է անհատական էլեկտրական տաքացուցիչներով, միայն երկու հարկաբաժին է ջեռուցվում գազային տաքացուցիչներով, որն էլ առաջացնում է կենցաղային անհարմարություններ, ինչպես նաև հանդիսանում է ընկերության սուղ ֆինանասական միջոցների անարդյունավետ վատնման պատճառ:

Առկա է նաև բակի բարեկարգման խնդիրը, մասնավորապես՝ ասֆալտապատման, ինչպես նաև ոռոգման ջրի անցկացման և մաշված խողովակների փոխարինման խնդիրներ:

Ընկերության՝ ժամանակակից սարքավորումներով և կահույքով հագեցվածության աստիճանը ևս լիարժեք համարել չի կարելի և արդիականացման անհրաժեշտությունը ակնհայտ է: Ընկերությունում շահագործվող բժշկական սարքավորումներն ու գույքը հիմնականում ձեռք են բերվել 1965-1990թթ., և այժմ ինչպես բարոյապես, այնպես էլ ֆիզիկապես հնացել են և լուրջ խոչընդոտ են հանդիսանում որակյալ բժշկական օգնություն և սպասարկում ապահովելու հարցում:

Ընկերության կողմից սպասարկվող դեպքերը հիմնականում լինում են բարդ և անհետաձգելի /տե՛ս Աղյուսակ 2/, ուստի առաջանում է անհապաղ հոսպիտալացման անհրաժեշտություն, իսկ նրանց հոսպիտալացման արդյունքում պարբերաբար գերազանցվում են ընկերության գլոբալ բյուջեով (պետական պատվերի շրջանակներում հատկացված գումարի) նախատեսված համամասնությունները, որի արդյունքում Ընկերությունը կրում է ֆինանսական շոշափելի կորուստներ /ընկերության ֆինանսական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում/:

Աղյուսակ 1

h/h	Հոդվածների անվանումը	2017թ.	2018թ.	2019թ.	2020	2021	2022թ. 1-ին կիսամյակ
I	***ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՈՒՏ,այդ թվում՝***	**543,525.0**	**618,767.5**	**606,788.3**	**669,621.9**	**726,357.0**	**466,645.0**
1	Բժշկական ծառայությունների մատուցումից ստացվող	**529,342.0**	**603,388.0**	**601,208.0**	**666,531.7**	**713,682.0**	**460,372.0**
1.1	Պետական պատվեր	**267,094.0**	**276,929.0**	**343,082.0**	**416,318.9**	**510,243.0**	**280,561.0**
1.2	Գիտության գծով	**25,737.0**	**30,373.0**	**36,316.0**	**31,401.0**	**44,690.0**	**27,263.0**
1.3	Վճարովի հիմունքներով	**236,511.0**	**296,086.0**	**221,810.0**	**218,811.8**	**158,749.0**	**152,548.0**
2	Այլ եկամուտներ	**12,553.0**	**5,045.5**	**4,120.3**	**1,924.2**	**6,450.0**	**5,394.0**
3	Անհատույց ակտիվներ	**1,630.0**	**10,334.0**	**1,460.0**	**1,166.0**	**6,225.0**	**879.0**
II	***ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝***	**538,115.0**	**616,998.8**	**606,535.8**	**717,816.1**	**724,924.0**	**460,162.0**
1	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	330,984.0	387,845.0	395,853.0	419,739.3	443,237.0	266,095.0
2	Դեղորայք և բժշկական պարագաներ	140,586.0	167,163.5	152,136.0	207,127.4	172,566.0	141,744.0
3	Կոմունալ ծախսեր	36,646.0	30,981.0	34,840.0	29,671.8	35,335.0	21,589.0
4	Ամորտիզացիոն հատկացումներ	8,242.0	10,657.3	700.0	9,546.5	10,000.0	
5	Այլ ծախսեր	16,281.0	15,540.0	18,067.3	47,529.4	59,757.0	28,763.0
III	**Շահույթ (վնաս)**	**5,410.0**	**1,768.7**	**252.5**	**(48,194.2)**	**1,433.0**	**6,483.0**
IIII	**Շահութահարկ**	**1,082.0**	**353.7**	**50.5**		**-**	
IV	**Զուտ շահույթ (վնաս)**	**4,328.0**	**1,415.0**	**202.0**		**1,433.0**	

Ընկերության 2017-2021 թվականների ֆինասատնտեսակ գործունեությունից ակնհայտ երևում է, որ չնայած այն համգամանքին, որ 2017 թվականի համեմատությամբ 21 թվականին պետական պատվերի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց ֆինանսավորման ծավալները ավելացվել են մոտ 35%-ով, այն դեռևս բավարար չէ ընկերության բնականոն գործունեությունը ապահովելու համար և անհրաժեշտություն կա ձեռնարկել միջոցառումներ ֆինանսական մուտքերը ավելացնելու համար, ինչպես առկա ենթակետերով, այնպես էլ նոր ծառայությունների ներդրման, մասնավորապես, դժվարամատչելի հետազոտությունների իրականացման միջոցով:

Հաշվի առնելով բուժհաստատության շենքային պայմանները և տեխնիկական հագեցվածությունը, հարմարավետ հիվանդասենյակների բացակայությամբ՝ բուժհաստատությունում բուժօգնություն են ստացող պացիենտների գերակշիռ մասը կազմում են սոցիալապես նապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձինք, որոնք և մարզերից, և Երևան քաղաքի առաջնային բժշկական օգնության հիմնարկների կողմից ուղեգրվում են «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ՝ որպես բարձրակարգ նեղ մասնագիտական, սակայն մատչելի բժշկական օգնություն ցուցաբերող կենտրոն:

ՊՊ խմբի անվանումը	Դուրս գրված			
	2019	2020	2021	2022
Սրտի անհետաձգելի վիրահատություններ	43	72	37	90
Անհետաձգելի բժշկական օգնություն	88	283	192	165
Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների սրտի վիրահատություններ	183	250	184	188
Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային փորձաքննություն և բուժում	12884	2554	4698	4443
Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության	991	788	1006	649
Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամների սրտի վիրահատություններ	38	2	51	60
Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ	173	48	562	169
Առանձին սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնություն	16	143	14	
Նոր կորոնավիրուսային վարակով (2019թ.n-cov) պայմանավորված դեպքերի հիվանդանոցային բժշկական օգնության ու սպասարկման ծրագիր			95	
Ընդամենը	14416	4140	6839	5764

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից՝ պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայություններից օգտվող անձանց մեջ մեծ տեսակար կշիռ են կազմում Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձիք և անհետաձգելի բժշկական օգնություն ստացող անձինք:

Վերոնշյալով պայմանավորված է նաև վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություններից ստացված մուտքերի ցածր տեսակարար կշիռը: Գործնականում քիչ են իրականացվում նաև վճարովի հիմունքներով մատուցվող ամբուլատոր ծառայությունները, մասնավորապես դժվարամատչելի հետազոտությունները, ինչպես նաև գոհացուցիչ չէ դիսպանսեր և շարունակական հսկողության իրականացման վիճակը:

Աղյուսակ 3

Հոդվածների անվանումը	**2017թ.**	**2018թ.**	**2019թ.**	**2020**	**2021**	**2022թ. 1-ին կիսամյակ**
ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՈՒՏ	**543525**	**618767.5**	**606788.3**	**669621.9**	**726357**	**466645**
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**538115**	**616998.8**	**606535.8**	**717816.1**	**724924**	**460162**
Վճարովի ծառայությունների տեսակարար կշիռ ընդամենը եկամուտներում	44%	48%	37%	33%	22%	33%

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից՝ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայությունների տեսակարար կշիռը ընամենը եկամուտներում կազմում է միջինում 36% /ըստ առանձին տարիների տատանվում է 44-22%/: Ընդ որում՝ ընկերության եկամուտների մեծ տեսակակար կշիռը ապահովում է ինտերվենցիոն սրտաբանության

բաժանմունքը՝ կորոնար անոթների անգիոգրաֆիկ և ստենտավորման ծառայությունների մատուցումից: Ընդ որում՝ անգիոգրաֆիայի սարքը հին է, բարոյապես և ֆիզիկապես մաշված, հաճախ խափանվում է, ինչի արդյունքում՝ բուժհաստատության մուտքերը կտրուկ կրճատվում են, իսկ նոր սարքի ձեռքբերումը բուժհաստատության կողմից գործնականում անհնար է՝ ոչ բավարար ֆինանսական միջոցների պատճառով:

Չնայած այն հանգամանքին, որ 2019 թվականի համեմատ 2021 թվականին վճարովի հիմունքներով մատուցվող ծառայությունների գծով Ընկերության Ընդամենը եկամուտները ավելացել են մոտ 35%-ով, սակայն այդ ցուցանիշը բավարար չէ ընկերության բնականոն գործունեությունը ապահովելու համար, քանի որ բավարար է միայն ընթացիկ ծախսերն իրականացնելու համար, և հնարավորություն չի ընձեռում ստեղծել լրացուցիչ ֆոնդեր վերանորոգման և տեխնիկական հագեցման նպատակով:

Ծախսային մասում տարիներ շարունակ չեն ներառվել բժշկական նորագույն ախտորոշիչ սարքավորումների ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, ինչը կարևոր նախապայման է ժամանակակից և որակյալ բժշկական ծառայություններ մատուցելու առումով, և կարևոր գործոն է շուկայում Ընկերության գրավչության և մրցունակության բարձրացման համար: Բացակայում են նաև գովազդների և հայտարարությունների գծով ծախսերը: Անառարկելի է, որ մարքետինգային և գովազդային միջոցառումների իրականացումը բնակչության դիմելիության աճի ապահովման կարևորագույն գրավականներից է: Ընկերության կողմից կադրերի վերապատրաստումների նպատակով իրականացվող ծախսեր ևս չեն իրականացվել: Ակնհայտ է, որ որակյալ մասնագիտական սպասարկում ապահովելու համար աշխատակիցների շարունակական վերապատրաստումների իրականացումն անհրաժեշտ պայման է:

Վերլուծելով բժշկական ծառայությունների շուկայի ներկայիս իրավիճակը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ մատուցվող բժշկական ծառայությունների որակը բարձրանում է առավելապես ի հաշիվ մասնավոր հաստատությունների, որոնք արձանագրում են զարգացման դրական միտում՝ ժամանակակից պահանջներին համահունչ ներդրումներ կատարելու արդյունքում:

Ներկայումս Ընկերությունը անկում է ապրում, ինչը հիմնականում պայմանավորված է ծառայությունների մատուցման տվյալ շուկայում դանդաղ կողմնորոշմամբ, սպառողների պահանջմունքներին դանդաղ արձագանքմամբ, ֆինանսավորման անբավարարությամբ, շենքային պայմաններով և տեխնիկական հագեցվածությամբ:

Ընկերությանը, ներկայիս առողջապահական շուկայում մրցունակ դարձնելու համար, անհրաժեշտ են մեծ ֆինանսական միջոցների ներդրում՝ շենքային պայմանների բարելավման, տեխնիկապես հագեցման համար, ինչը գործնականում անհնարին է բուժհաստատության ներկայիս ֆինանսատնտեսական վիճակից ելնելով:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ տարածաշրջանում գործում են նեղ մասնագիտքական սիրտ-անոթային ծառայություններ մատուցող 2 հագեցված և առաջատար բուժհաստատություններ, Ընկերությունում ներդրումների իրականացումը ոչ արդյունավետ է՝ հաշվի առնելով կատարվող աշխատանքների ծավալը, ետգնման երկարատևությունը և ռիսկերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ակնհայտ է դառնում, որ Ընկերությունը չունի համապատասխան ֆինանսական և կադրային ռեսուրսներ՝ ազգաբնակչությանը անհրաժեշտ ծավալի և որակի բժշկական ծառայություններ մատուցելու, ինչպես նաև սեփական ռեսուրսներով զարգանալու համար, ուստի՝ անհրաժեշտ է վերջինս վերակազմակերպել՝ այլ բուժհաստատության հետ միացման ճանապարհով:

Ելնելով վերոգրյալից՝ նպատակահարմար է համարվել Երևանի ենթակայության «Լևոն Հովհաննիսյանի անվան ԳՀԻ» ՓԲԸ-ն վերակազմակերպել՝ միացնելով Երևանի ենթակայության «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ին, հաշվի առնելով, որ «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ն /այսուհետ՝ բուժհաստատություն/ 2022 թվականի դեկտեմբեր ամսից անցնում է Երևան համայնքի ենթակայության: Բուժհաստատությունը 2012 թվականից հանձնված է եղել հավատարմագրային կառավարման՝ ներդրումներ իրականացնելու, շենքային պայմանները բարելավելու, տեխնիկապես հագեցնելու պայմանով: Հավատարմագրյին կառավարման ընթացքում բուժհաստատությունում կատարվել է ավելին քան 1.6 մլրդ դրամի ներդրումներ վերոնշյալ ուղղություններով: Բուժհաստատությունը հանդիսանում է բազմապրոֆիլ բժշկական կենտրոն և իր ուրույն տեղն է գրավում առողջապահական համակարգում: 2023 թվականի նախատեսվում է նաև Երևանի բյուջեի միջոցների հաշվին բուժհաստատությունը հագեցնել նոր կոմպյուտերային տոմոգրագիայի և անգիոգրաֆիայի սարքերով:

Բուժհաստատության հետագա զարգացման համար նախատեսվում է «Լևոն Հովհաննիսյանի անվան ԳՀԻ» ՓԲԸ-ն միավորել բուժհաստատությանը՝ որպես նոր սիրտ-անոթային ծառայություն՝ հետագայում ընկերության կողմից մատուցվող ծառայությունը ամբողջությամբ տեղափոխելով բուժհասատության տարածք, ինչը հնարավորություն կտա մինիմալ ներդրումներով ստեղծել հիմնանորոգված և ժամանակակից պահանջներին և պայմաններին համապատասխանող սարքավորումներով հագեցած սիրտ-անոթային բաժանմունք բազմապրոֆիլ բժշկական կենտրոնում:

Միաժամանակ՝ նախատեսվում է «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ում ներդրնել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների նոր տեսակներ և վերջինս անվանափոխել՝ դարձնելով «Երևանի ենթակայության «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերություն»: Արդյունքում՝ Երևանի ենթակյությամբ կունենանք տիպային բազմապրոֆիլ բժշկական կենտրոն, որտեղ պացիենտը հնրավորություն կունենա 1 տեղում ստանալ բժշկական օգնության և սպասարկման՝ իրեն անհրաժեշտ բոլոր տեսակները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՀԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու, կանոնադրության փոփոխությունը հաստատելու և «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության միացման ձևով վերակազմակերպելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՀԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու, կանոնադրության փոփոխությունը հաստատելու և «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության միացման ձևով վերակազմակերպելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ